ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2025թ-ից, որի ընթացքում պետք է իրականացվեն ապահովագրական փաթեթի, ծառայությունների գների հաշվարկման պարբերական գնահատումներ, դեղերի ծախսերի հաշվարկի մշտադիտարկում և գնահատում, ապահովագրվածների ռեգիստրում ֆինանսական շարժի տեխնիկական նկարագրի մշակման աշխատանքներ:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է տվյալների հավաքագրման և վերլուծության խորհրդատվության իրականացում համապատասխան մասնագետների ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահական տվյալների հավաքագրման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահության ֆինանսավորման ցուցանիշների գնահատման նպատակով տվյալների հավաքագրման և գնահատման աշխատանքների իրականացում, այդ թվում

1. Ապահովագրական փաթեթի շրջանակներում սպասարկվող բնակչության վերաբերյալ տվյալների հավաքագրում առկա բաց աղբյուրներից, ինչպես նաև գերատեսչություններից կատարված առանձին հարցումների հիման վրա:
2. Հավաքագրված տվյալների ստանդարտացում, համապատասխան ամփոփ աղյուսակների կազմում և վերլուծում:

3. Առողջապահության ֆինանսավորման միջազգային համեմատականների կազմում, երկրների ապահովագրական համակարգերի համեմատական տվյալների վերլուծություն և համադրում Հայաստանի համանման ցուցանիշների հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Մասնագետից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում Պետական առողջապահական գործակալությանը:

Բացի վերը նշված աշխատանքներից, մասնագետը, ըստ անհրաժեշտության, Պետական առողջապահական գործակալության կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն աշխատանքի նկարագրի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 30.06.2025 թվականը՝ երկարաձգման հնարավորությամբ:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- Առնվազն 1 տարվա փորձառություն ֆինանսական տվյալների հետ աշխատանքում,
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների

նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: